



29(531)

31.10.2018

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստություն եւ գիրապո, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԾԾ ՊՒՅԻ ԸՈՒՍՈՒՍՍՈՒՑ ԾՁԵ ԶԻՄՈՒՍՈՒՑ ԶԻՄՈՒՍՈՒՑ ԶԻՄՈՒՍՈՒՑ 75 ԻՉԾՈՒՍՈՒՑ 3/4



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան նշում է իր հիմնադրման 75-ամյակը: Հայաստանի գիտությունների ակադեմիան ստեղծվել է 1943թ. նոյեմբերին ՀՍՍՌ կառավարության որոշմամբ: Առաջին պրեզիդենտ է ընտրվել աշխարհահռչակ Երմիտաժ թանգարանի տնօրեն ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: 1947թ. ակադեմիայի պրեզիդենտ ընտրվեց տեսական աստղաֆիզիկայի հիմնադիր՝ հանրահայտ գիտնական Վիկտոր Համբարձումյանը: Ակադեմիայի հիմնադրման պահին հասարակական գիտությունները ներկայացված էին Պատմության, Լեզվի և Գրականության ինստիտուտներով, հետագայում ստեղծվեցին Արվեստի, Արևելագիտության, Տնտեսագիտության, Փիլիսոփայության և իրավունքի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտները: Մեծ ուշադրություն դարձվեց ճշգրիտ գիտությունների

զարգացմանը. ստեղծվեցին ինստիտուտներ բնական գիտությունների բնագավառում: Կարևորվեց տեխնիկական գիտությունների ասպարեզում ժամանակակից հետազոտությունների իրականացումը: Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի 46-ամյա ղեկավարման ժամանակահատվածում Հայաստանի գիտությունների ակադեմիան կայացավ, ունեցավ ծանրակշիռ ձեռքբերումներ, առաջատար դեր ստանձնեց Խորհրդային Միության հանրապետությունների գիտությունների ակադեմիաների շարքում, ճանաչելի դարձավ արտասահմանում: 1992թ.՝ Հայաստանի երրորդ հանրապետության ինքնավարացումից հետո, ՀԽՍՀ ԳԱ-ն վերանվանվեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա: 1993թ.՝ Հայաստանի երրորդ հանրապետության կազմավորման դժվարին ժամանակաշրջանում, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ընտրվեց ճանաչված պետական գործիչ, գիտության և գիտական արտադրության անվանի կազմակերպիչ Ֆադեյ Սարգսյանը: Տնտեսական վերափոխումներին զուգահեռ հույժ կարևոր էր հոգածությունը գիտության հանդեպ՝ պահպանել գիտական հիմնական ուղղությունները, գիտական ներուժը, նախկին

գիտական կապերն ու համագործակցությունը: ՀՀ ԳԱ-ն անդամակցեց Գիտությունների ակադեմիաների միջազգային ընկերությանը, սկսեց համագործակցել միջազգային ճանաչված կառույցների հետ, իր գիտական հետազոտություններում ներգրավեց օտարերկրյա հայ գիտնականների: 2006թ. ՀՀ ԳԱ նախագահ ընտրվեց ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ոլորտի հայտնի մասնագետ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Մեծապես ակտիվացավ ակադեմիայի միջազգային համագործակցությունը: Ակադեմիան ակտիվ մասնակցում է «Հորիզոն-2020» ծրագրին, որտեղ նախագծերի մեծ մասն իրականացվում է ՀՀ ԳԱ գիտական կազմակերպությունների կողմից: ՀՀ ԳԱ-ն միավորում է 34-ից ավելի գիտական ինստիտուտներ, հաստատություններ, ձեռնարկություններ և այլ կազմակերպություններ: ՀՀ ԳԱ նախագահությունն ունի, ըստ գիտության բնագավառների, գիտությունների հինգ բաժանումներ՝ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների, ֆիզիկայի և աստղաֆիզիկայի, բնական գիտությունների, քիմիական և երկրի մասին գիտությունների, հայագիտության և հասարակական գիտությունների:

Ակադեմիայի աշխատակիցների ընդհանուր թիվը 3800-ից ավելի է, այդ թվում՝ շուրջ 340 գիտության դոկտոր և 1100 գիտության թեկնածու: Ակադեմիայի կազմում ընդգրկված են 46 ակադեմիկոս, 56 թղթակից անդամ, 4 պատվավոր անդամ, 133 արտասահմանյան անդամ և 40 պատվավոր դոկտոր: Հպարտությամբ նշենք, որ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի կազմում մեծ թիվ են կազմել արցախածուցիչ ակադեմիկոսները: Ելույթ ունենալով ՀՀ ԳԱ 75-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառմանը՝ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանն ասել է. «20-րդ դարում Խորհրդային Միությունում շատ լավ հասկանում էին, թե ինչ է հայկական միտքը, հայկական մտավոր ներուժը, և դա է պատճառը, որ պատերազմի տարիներին Հայաստանում ստեղծվեց գիտությունների ակադեմիա, որը դարձավ մեր գիտական մտքի շարժիչ ուժը: Հոբելյանը լավագույն առիթ էր խոսելու գիտության մասին: Ներկայացնելով իր տեսլականը՝ ՀՀ նախագահն իր ելույթն ավարտել է այս խոսքով. «Ժամանակն է, որ հայ ժողովուրդը ծնի իր Նոբելյան մրցանակակիրներին»:

Երբ սկսվեց Արցախյան պատերազմը, և մեր երկիրը հայտնվեց շրջափակման մեջ, բոլորս տոգորված էինք այն հավատով և լավատեսությամբ, որ հայ գիտնականները կստեղծեն այնպիսի զենք, որի շնորհիվ մեր թշնամուն հավիտյանս կլռեցնենք: Այդ հավատը հիմա էլ կա: Արցախի արգանդը չի դադարել տաղանդներ ծնելուց: Պարզապես պարարտ հող պետք է ստեղծել, ինչի գիտակցումն արդեն գերակա է: Նույն հոբելյանական միջոցառումների ժամանակ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանն ասել է. «Սովետական Հայաստանը ԽՍՀՄ-ում ուներ այնպիսի տեխնոլոգիական և գիտական ղեկավարում, ինչպիսին ժամանակակից աշխարհում ունի Սիլիկոնային հովիտը: Այս իրավիճակն ստեղծված էր նաև ակադեմիայի համակարգի գործունեության շնորհիվ»: Շարունակելով միտքը՝ նա ասել է. «Հայաստանը պետք է լինի ինտելեկտուալ, զարգացած տեխնոլոգիական երկիր, որովհետև մենք հավատում ենք, որ բացարձակապես բոլոր խնդիրների լուծման ամենակարևոր գործիքը մարդկային միտքն է: Դա նշանակում է՝ մեզնից յուրաքանչյուրի, յուրաքանչյուր պետության, յուրաքանչյուր ոլորտի առջև բացված են անասիման հնարավորություններ, և հույս ունենք, որ կկարողանանք օգտագործել դրանք»:

2800-ամյակ

Հայության ոստան Երևան: Քեզ ուղղված բոլոր հայերի հույսերի մարմնացում, ոսկեշարժ Երևան: Մոմունենտիդ բարձունքից դեպի վերև՝ Նորքի բարձրադիրները ձգվող և մինչև հարավային լանջերը ծավալված լույս քաղաք Երևան: Քաղաքամայր Երեբունի-Երևան, հիմնադրվելով մ.թ.ա. 782թ. Մենուայի որդի Արգիշտի 1-ինի կողմից, հայության 12 մայրաքաղաքներից՝ Վանից, Արմավիրից, Երվանդաշատից, Արտաշատից, Տիգրանակերտից, Վաղարշապատից, Դիլիջից, Բագարանից, Շիրակավանից (Երազգավորս), Կարսից, Անիից, ամենից կանգունը, հզորագույնը և ամենակերտվածը եղար: Մյուսները կանչի են սպասում նիրհից զարթնելու, ավերումից հառնելու ու քեզ ընկերակից դառնալու: Դու ցողաթաթախ թարմություն ես, հայության մտքերի սևեռումների, հայապահպան հույսի քաղաք Երևան: Արևազօծ քաղաք: Բույրո՞՞ ծաղկունքված, հեքո՞՞ աշունքված, ինքո՞՞ տոնական, բազմաբուրյան Երևան: Աշնանային տոնակատարությունը ոսկեզօծվել է շքեղ գույներով: Արևը ոսկի է թափում ու փարվում լանջերիդ սիրասուն: Անունդ գույն է ու ռանգ: Երևան է քո շռինդը, բարությունը, քաղցրությունը, շռայլությունը, զուտ հայկական հյուրանմեծարությունը: Հայի քաղցրություն ունես, Երևան, սիրելի՛ Երևան, հայի բուրնունք ունես, հայի բերկրանք: 2018թ. հոկտեմբերի 21-ի քո 2800-ամյա տոնակատարությունը Աստծո պարզն է քեզ: Աստծո օրհնությունը կա քո տոնական օրը: Դու բերդ-ամրոց ես, պատնեշ Երևան, Դու ամուր սյուն ես, կանգուն Երևան, Օջախ ու տուն ես, պարծանք Երևան, Սուրբ օրորան ես, խորան Երևան... Աստծո շնորհքը քո մեջ է, լույս քաղաք Երևան: Մայթերդ ողողված են արևով, ու հոսքեր են ընթանում առաջ, զվարթ մարդկային հոսքեր, որ բյուրացնում են քո խնդրությունը,

ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԵՐԵՎԱՆ

Երևան, ապրում ենք քեզանով, շնչում տաք բույրդ ու զնայվում քեզանով: Մասիասիայաց Երևան: Հայրական սիրով քեզ ուղջունում է վեռ, ծյունագետ, անարատ Մասիսը՝ սրբազան լեռը քեզ այնքան՝ մոտիկ, այնքան՝ վիրավոր ու հեռավոր... Փայփայիր զավակներիդ, Երևան, եղի՛ր հավետ կանգուն և զորացիր, ծլի՛ր ավելի, որ բողբոջեն բոլոր հույսերդ, Երևան: Ժիր մանուկներդ իրենց թափկներով վառ

նի՛ քաղաք Երևան: Չկա այլևս այն հին գավառական Երևանը, այլ միայն՝ նոր ու սքանչելի Երևանը: Հայաստանի անկախացումը քեզ բերեց հույս, լույս, երկունք՝ օծելով քեզ ոստան: Դու դարձար հայության դեմքը, որ նորոգեց իր անկրկնելի քաղաքը՝ Երևանը: Ողջ հայությունը քո թիկունքն է, Երևան: Դու ճախրիր ու ազատության երկնականարը լցրու իղծերի ու բաղձանքների իրականացմամբ: Անամա քաղաք Երևան, հայության վերջին ոստան: Բարձրացրու՛ հազարամյա հայացքը, Երևան: Փյունիկված երկրիդ պատմությունից հառնիր որպես ծովածուփ ծփանքի քաղաք: Մեծերի ու պոետների քաղաք՝ Երևան: Արևմյանի, Չարենցի, Շիրազի, Սևակի և մեր մտքի մյուս հսկաների մեծագույն քաղաք, քո տաք շնչով ջերմացրու բոլոր հայերին մայր հայրենիքում և համայն Սփյուռքում: Փարվիր բոլորին մայրական սիրով: Դու հավերժի քաղաք Երևան: Քո գալիքի զավակները պիտի երգեն քո նոր երգը՝ արդեն Մասիսը տուն բերած... Դու ես դեմքը հայության, որ երկնեց իր հավիտենական քաղաքը՝ սրբության սրբոցը իր ազգապահպան: Երևան, զորացիր, ավելի զորացիր, Երևան և զորացրու զավակներիդ, որ ամենուր են՝ այստեղ և աշխարհով մեկ սփռված սև եղեռնի պատճառով ու քո հույսին են, Երևան: Դու մեր մտքի քանթար Երևան, զավակներդ քեզ են փարվում, նրանց սիրով դու ապրիր, գիտուններդ զորությունդ են, թող քեզ զինեն, զրահվիր: Ինչքան ունես քանքարավոր զավակներ, նրանց հույզով դու վարարվիր ու մեզ պահիր, Երևան: Աշխարհի քաղաքների մեջ դու եզակի մայրաքաղաք, քեզ ո՛ւն հետ մենք համենատենք, երբ սկզբնավորն ես, Հռոմն ու Կարթագենը քո հետքերով պիտի գային, հին ու հավերժ քաղաք Երևան: Ծաղկիր ու նորոգվիր, Երևան: 2800-ամ-

յակը քո վերջին մեծ հոբելյանը չէ: Դեռ կլինեն ամենափառավորները: Դու դարձիր ավելի փթթուն, շենշող հայոց երկրի հզոր մայրաքաղաք: Ամեն մի շեն ու ավանդ, գյուղ ու քաղաք, հարավային ու հյուսիսային դարպասներդ ամրացրու, քո գրկի մեջ առ Արցախ որդուդ ու քո բոլոր տարածքները փաղաքուշ ձեռքերովդ պահիր, Երևան: Երևան, դու կաս, ու մենք ևս կանք: Ջավակներդ շատ են եղել ցիրուցան, բեր ու դարձրու հզոր Հայաստան: 100 տարվա մեջ դու հառնեցիր ու սնեցիր մեզ, հնասերուցք Հայաստան: Լույսերով ողողիր մեր սրտերը ու ջերմացրու նորոգմամբ հայոց աշխարհը հին ու նոր: Կամարակապ մեր լույս քաղաք Երևան, ծիածանի մեր հույսերդ երկնավան: Մեզ առաջնորդիր դեպի վեճ քո ապագան, դու հույսերի վարար ակունք, հաղթանակած զավակներիդ դու ամուր կուռ Երևան: Դու սիրտ, տրուփ ու համազարկ, հայադավան Երևան, վերածնիր հնամենի այս երկիրը՝ դարձնելով երկիրն հայոց ամուր պատվար, առատ հունձքի շտեմարան: Ջավակներդ զինվորվել են շուրջբոլորդ, դու մեր սահման հոգեպահպան մտքերի, առողջ ոգու ու պինդ բազկի, մղի՛ր մարտդ հոգեպահպան դիրքերի, որոցդ որդի մեզ ավանդված հրաշք քաղաք Երևան: Կայացրու՛ մեզ և կայացիր այն վճռով, որ ոչ մի հույս, ոչ մի ձգտում նանիր պատրանք չդառնա: Դու մեր մտքի ճարտարապետ, վերակերտվող մեծ քաղաք, դարձրու երկիրն այս հնավանդ, երկիր հզոր ու անպարտ: Գիտելիքի ու գիտության, մշակույթի ու արարման մեծ օթևան Երևան, երկնիք քո լույս կոթողներդ սրբակերտ՝ վեր հանելով քանքարներդ հանճարեղ: Շորորանքով դու ծփա, զեղզեղանքով դայլայլիր ու հրաշքով ճառագիր հոբելյանիդ փառահեղ 2800-ամյա լուսաթաթախ, դարակերտված մեր ոստան, հայապահպան, հայամեծար քաղաքամայր Երևան:

Քաղաքամայր Երեբունի-Երևան, հիմնադրվելով մ.թ.ա. 782թ. Մենուայի որդի Արգիշտի 1-ինի կողմից, հայության 12 մայրաքաղաքներից՝ Վանից, Արմավիրից, Երվանդաշատից, Արտաշատից, Տիգրանակերտից, Վաղարշապատից, Դիլիջից, Բագարանից, Շիրակավանից (Երազգավորս), Կարսից, Անիից, ամենից կանգունը, հզորագույնը և ամենակերտվածը եղար: Մյուսները կանչի են սպասում նիրհից զարթնելու, ավերումից հառնելու ու քեզ ընկերակից դառնալու: Դու ցողաթաթախ թարմություն ես, հայության մտքերի սևեռումների, հայապահպան հույսի քաղաք Երևան: Արևազօծ քաղաք: Բույրո՞՞ ծաղկունքված, հեքո՞՞ աշունքված, ինքո՞՞ տոնական, բազմաբուրյան Երևան: Աշնանային տոնակատարությունը ոսկեզօծվել է շքեղ գույներով: Արևը ոսկի է թափում ու փարվում լանջերիդ սիրասուն: Անունդ գույն է ու ռանգ: Երևան է քո շռինդը, բարությունը, քաղցրությունը, շռայլությունը, զուտ հայկական հյուրանմեծարությունը: Հայի քաղցրություն ունես, Երևան, սիրելի՛ Երևան, հայի բուրնունք ունես, հայի բերկրանք: 2018թ. հոկտեմբերի 21-ի քո 2800-ամյա տոնակատարությունը Աստծո պարզն է քեզ: Աստծո օրհնությունը կա քո տոնական օրը: Դու բերդ-ամրոց ես, պատնեշ Երևան, Դու ամուր սյուն ես, կանգուն Երևան, Օջախ ու տուն ես, պարծանք Երևան, Սուրբ օրորան ես, խորան Երևան... Աստծո շնորհքը քո մեջ է, լույս քաղաք Երևան: Մայթերդ ողողված են արևով, ու հոսքեր են ընթանում առաջ, զվարթ մարդկային հոսքեր, որ բյուրացնում են քո խնդրությունը,

ՏԵՍԱԿԵՏ

ԻՆՉՈՒ ԵՆՔ ՀՐԱԺԱՐԿՈՒԻՄ ՀԱՍԱՆԵԼԻ ԳԻՏԵԼԻՔԻՑ

«Գիտելիքի հանդեպ դիմադրություն» քեման ուսումնասիրելու համար շվեդ հասարակագետներն օրերս ստացել են 5.4 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք դրամաշնորհ:

Գիտնականները փորձելու են հասկանալ, թե ինչու մարդիկ չեն ուզում գիտելիքներ ձեռք բերել այն դեպքերում, երբ այդ գիտելիքը հասանելի է: Տասնամյակներ առաջ թվում էր, թե մարդիկ չեն սովորում, քանի որ գրքերը, ռեսուրսները շատ քչերին են հասանելի: Այսօր ունենք բոլորովին այլ իրավիճակ: Գիտելիքն անձնուր է, շատ դեպքերում՝ անվճար, բայց շատ քիչ թվով մարդիկ են օգտվում կրթության հնարավորություններից:

Սա կրթության կարևորագույն առեղծվածներից մեկն է: Ինչո՞ւ մարդիկ չեն ուզում սովորել գիտելիքի աղբյուրների անախադեպ առատության պայմաններում: Պատճառները մի քանիսն են: Հիմնական պատճառներից մեկն այն է, որ ակադեմիական գրքերի, ուսումնական ռեսուրսների բազմապատկանը զուգահեռ ավելացել են նաև այլ ռեսուրսներ:

Օրինակ՝ ինֆորմացիան, սերիալները, զվարճանքի ինդուստրիան նույնպես շեշտակի աճել են: Ընդ որում, վերջիններիս ստեղծման համար ծախսվում են շատ ավելի մեծ ֆինանսական միջոցներ, քան կրթության ֆինանսավորման վրա: Կշեռքի մի նմարի վրա 50-60 հազար աշխատավարձ ստացող ուսուցիչն է և նրա վարած դասը, մյուս նմարի վրա՝ հսկայական գումարներ ստացող սերիալի կամ ֆուտբոլի ինդուստրիան: Ինչպե՞ս կարող է ուսուցիչը երեխաներին համոզել սովորել ակադեմիական

նյութեր, եթե իր վրա անհամեմատ ավելի քիչ գումար է ներդրվում, քան սերիալի ցուցադրման: Արդյունքում ուսուցիչ չի լավ աշխատելու մոտիվացիան նվազում է, ինչն էլ բացասաբար է անդրադառնում գիտելիքի նկատմամբ սովորողների վերաբերմունքի վրա:

Մյուս պատճառն այն է, որ այսօր կրթական համակարգում ներդրումներ են արվում բովանդակությունը փոխելու, ուսուցիչներին վերապատրաստելու վրա, բայց գրեթե ոչինչ չի արվում երեխաների սովորելու մոտիվացիան բարձրացնելու, ուսումնական նյութերն ավելի հետաքրքիր ու գրավիչ դարձնելու ուղղությամբ: Այսօր շատ մեծ մրցակցություն է ծավալվել մարդկանց ուշադրությունը գրավելու առումով: Եվ այս մրցակցությունում կրթությունը պարտվում է:

Երրորդ պատճառն այն է, որ ժամանակակից երեխաները փոխվել են, իսկ կրթական համակարգի մոտեցումները գերազանցապես մնացել են նույնը: Օրերս Հայաստանի դպրոցներից մեկի տարրական դասարանում արձանագրվել է այսպիսի դեպք: 2-րդ դասարանի աշակերտը դասի ժամին վեր է կենում և սկսում է դասարանում քայլել: Երբ ուսուցիչն աշակերտին ասում է, որ նստի իր տեղում, վերջինս պատասխանում է. «Ինչո՞ւ Դուք երբ ուզում եք՝ նստում եք, երբ ուզում եք՝ քայլում, իսկ ես չեմ կարող: Ես էլ եմ մարդ: Ես էլ եմ ուզում ձեզ մեծն վարվել»:

20-30 տարի առաջ ոչ մի երեխա ոչ միայն նման բան չէր անի, այլև մտքով անգամ չէր անցնի իրեն հավասարեցնել ուսուցչի հետ: Բայց այսօրվա երեխաները տարբեր են:

Նրանք շատ արագ են ըմբռնում, շատ արագ են հասկանում որոշ բաներ և ուզում են ավելի հավասար լինել մեծերի հետ: Իսկ մեր մանկավարժությունն ամբողջությամբ կառուցված է անհավասարության վրա:

Գիտնականները պնդում են, որ արագացել է երեխաների ֆիզիոլոգիական աճը, փոխվել է երեխայի ուղեղը: Արագ աճող երեխաներին մենք ավելի երկար ենք պահում այնպիսի ուսումնական հաստատություններում, որոնք գրեթե չեն փոխվել: Սա է պատճառը, որ 8-9-րդ դասարանից սկսած՝ երեխաների զգալի մասը սկսում է ծանծաղակ դպրոցներում, իսկ ավագ դպրոցում ունենք հաճախումների լուրջ խնդիր: Իրավիճակը բարվոք չէ նաև համալսարաններում, որտեղ 3-րդ կուրսից սկսած՝ ուսանողների մի զգալի մասը սկսում է ուսման հաշվին աշխատել, իսկ մի մասն էլ՝ անուսմանալ:

Խնդիրն այն է, որ մարդու աճն արագացել է, և երեխաները ցանկանում են ներգրավված լինել ավելի մասնակցային գործընթացներում՝ դասարաններում ու լսարաններում պասիվ լսելու փոխարեն: Այսօրվա 16-17 տարեկան երեխաներն իրենց ֆիզիոլոգիական աճի մակարդակով հավասար են նախկին 19-20 տարեկաններին: Նման երեխաներին պահել հնաճ կրթության համակարգում՝ արդյունավետ չէ և ռեսուրսների անհիմաստ վատնում է:

Որո՞նք են լուծման տարբերակները: Առաջին հերթին՝ կրթության ոլորտում աշխատող մարդիկ պետք է հասկանան, որ երեխաները փոխվել են, ինչ

չի արդյունքում հին աշխատանքի բազմաթիվ տարրեր այլևս արդյունավետ չեն: Պետք է ուսուցումը դարձնել ավելի հետաքրքիր և ներգրավող: Ուսումնական գործընթացում տեսական նյութին զուգընթաց անպայման պետք է լինեն գործնական մոտեցումներ:

Շատ մեծ ուշադրություն պետք է դարձնել դպրոցից, համալսարանից դուրս գտնվող միջավայրը կրթական դարձնելու վրա: Հեռուստատեսային հաղորդումները, ինտերնետ միջավայրը, քաղաքային միջավայրը պետք է հագեցած լինեն ուսումնական ռեսուրսներով: Քաղաքներն ու գյուղերը պետք է դառնան սովորող միջավայր: Դպրոցներն ու համալսարանները չեն կարող հաջողության հասնել, եթե արտաքին միջավայրը հակակրթական է:

Պետք է կարևորել վաղ մանկության կրթությունը: Օրինակ՝ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի ջանքերով այսուհետ կրթությունը 3 տարեկանից կլինի պարտադիր: Ապացուցված է, որ փոքր տարիքում երեխայի վրա ազդելու հնարավորություններն ավելի մեծ են: Մինչդեռ Հայաստանում երեխաների կեսը մանկապարտեզ ընդհանրապես չի հաճախում: Ոչինչ չի արվում նաև կրտսեր դպրոցը զարգացնելու ուղղությամբ:

Հուսով եմ, շվեդ գիտնականների հետազոտության ավարտին «168 ժամ» թերթի իմ սյունակը դեռ կլինի, և առիթ կունենամ ներկայացնելու, թե ինչ բացահայտումներ արեցին նրանք:

Սերոբ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կրթության փորձագետ
168.am

ՕձԺ100-ՉՕՄՁԻՔՍ ԱՍՂ, ՉԵՁԹ



2019թ. Երևանի պետական համալսարանը կնշի իր 100-ամյա հոբելյանը: Հայաստանի մայր բուհը հայ ժողովրդի պատմության մեջ բացառիկ դերակատարություն ունի: Այն տասնյակ հազարավոր մասնագետներ է պատրաստել Հայաստանի, Արցախի և Սփյուռքի համար: Այսօր էլ սերտ կապեր ունի Արցախի մայր բուհի հետ: Արցախցի շատ երիտասարդներ շարունակում են բակալավորական, մագիստրոսական և ասպիրանտական կրթություն ստանալ Երևանի պետական համալսարանում:

Հոբելյանական միջոցառումների սկիզբը կազդարարվի Գյումրիում, որտեղ տեղի է ունեցել համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառումների շարքում ընդգրկված են գիտաժողովներ, հանդիպումներ, այցելություններ, սեմինարներ, ցուցահանդեսներ, գրքերի հրատարակումներ, մարզանշակառույցներ, ինչպես նաև հանրային նշանակություն ունեցող միջոցառումներ: Դրանք կկազմակերպվեն նաև ՀՀ մարզերում ու Արցախում

Հոկտեմբերի 28-ին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան Գուրգեն Մելիքյանի գլխավորությամբ համալսարանականների և արցախցիների մասնակցությամբ հերթական ծառատունկը կազմակերպվեց Քաշաթաղում: Այս անգամ այն նվիրված էր ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին: Տնկվեց 100 ընկուզենի և 10 թթենի: Նորաստեղծ պուրակը հիմնվեց դեպի Երևան ձգվող մայրուղու կրճ. Բերձորի մուտքի մոտ: «Երևանի պետական համալսարանը, որը գիտության, պայքարի, հերոսացման կենտրոն է, որտեղից դուրս են եկել հրաշալի հայորդիներ, մշտապես իրականացնում է նման առաքելություն», - հայարտությամբ ասաց Գ. Մելիքյանը:

Սեփ. լրատվություն

ԾՉԾԻ ՉԾՂԱՉՍՔՍ, ՉԵԱՍՂԻՉԾՍՕԾ

2004 թվականին ստեղծված «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» (ԿՏԱԿ) պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը գործում է՝ լիազորված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից, զբաղված է հանրակրթական դպրոցները ժամանակակից համակարգային սարքավորումներով համալրելով, կրթօջախների միջև համակարգային ցանց ներդնելով, ուսումնական կենտրոններ ստեղծելով, համակարգային ուսումնական նյութերի և ծրագրային փաթեթների մշակումով ու բազում այլ ծրագրերի իրականացմամբ: ԿՏԱԿ-ի շարժական ինտերնետային համակարգային կայանը մեկ ամիս շարունակ գտնվում էր Քաշաթաղի շրջանի Ողջի գետի ավազանի համայնքների դպրոցներում և աշակերտների համար իրականացրեց համակարգային դասընթացներ: Հոկտեմբերի 12-ին Միջնակարգի Գալինա Ստարովոյտովայի անվան միջնակարգ դպրոցի բակում էր շարժական ինտերնետային համակարգային կայանը, որի համակարգիչներից օգտվում են աշակերտները: Կայանն սպասարկող մասնագետներ Արթուր և Տիգրան Միրիբայանները տեղեկացրին, որ մինչ Միջնակարգ գալը եղել են Կովսակյան քաղաքի Թաթուլ Կրպեյանի անվան ու Վան գյուղի միջնակարգ դպրոցներում և դասընթացներ անց-

կացրել աշակերտների հետ: Նշեցին, որ ուսուցիչների համար էլ անցկացնում են համակարգային գրագիտության դասընթացներ: Կարևորեցին, որ աշակերտները սիրով են մասնակցում դասընթացներին, ծանոթանում համակարգային գաղտնիքներին, ցուցաբերում հետաքրքրություն: Միջնակարգում այդ օրերին 30-ից ավելի աշակերտ է մասնակցել դասընթացներին: Մեր երկու հանրապետությունների կրթության և գիտության նախարարությունների համագործակցության շրջանակներում ԿՏԱԿ-ի շարժական կայանը եղել է Արցախի տարբեր շրջաններում, դպրոցներում, օժանդակել Հայրուքի շրջանի Ազոխ գյուղի միջնակարգ դպրոցի համակարգային սենյակի համակարգիչների ծրագրերի տեղադրմանը: ԿՏԱԿ-ի շարժական կայանը Քաշաթաղի շրջանում հնարավոր է գործի մեկ ամսից շատ՝ կախված պահանջարկից:

Միջնակարգում կայանի աշխատանքներին ծանոթացավ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը, որն աշխատանքային այց էր կատարել դպրոց: Համակարգային դասընթացներին մասնակից աշակերտները գոհունակություն հայտնեցին, որ հնարավորություն է տրվել առավել շատ գիտելիքներ ձեռք բերել համակարգիչն աշխատացնելու ուղղությամբ:

ՍՉԵՁԻ ԾՂԻՉԾՉՍՔ ՉԵԱՍՂԻՉԾՍՕԾ

Քաշաթաղի շրջանի Մոշաթաղ գյուղն ընկած է Աղավն գետի ձախափնյա հարթությունում: Շրջանի առաջին վերաբնակեցված բնակավայրերից ու արդեն կայացած համայնք, որի մեջ են մտնում նաև Հերիկ ու Բերդիկ գյուղերը: Մոշաթաղն ունի պետական մանկապարտեզ, ուր հաճախում է 14 երեխա, աշխատում 9 հոգի: Նախակրթարանը տեղակայված է միջնակարգ դպրոցի շենքի առաջին հարկում, ունի բարեկարգ տարածք՝ սամահանդույցով, խոհանոցով, մեջասեյակով ու դասասենյակներով, բուժկետով և համապատասխան գույքով: Մեկ հաստիքի տակ աշխատում է երկու դաստիարակ՝ Մերի Կարապետյանը և Ծովինար Սողոմոնյանը: Երաժշտական մասն ապահովում է Ազապե Գասպարյանը:

Վերջերս այցելեցի Մոշաթաղ, եղա մանկապարտեզում: Տնօրեն Համեստ Հակոբյանը տեղեկացրեց, որ նախակրթարան հաճախում են հիմնականում Մոշաթաղի երեխաները՝ 2 տարեկանից սկսած: Սննդի հարցը կարգավոր-

ված է. համագործակցում են հիմնականում գյուղում գործող երկու խանութի հետ: Ջեռուցումը կատարվում է էլեկտրական ջեռուցիչներով: Այս օրերին դպրոցի շենքը «Հայրենասեր» հասարակական կազմակերպության կողմից վերակառուցվում և ընդլայն-



վում է, որը հնարավորություն կտա կրթօջախներում ջեռուցումն իրականացնել կենտրոնացված կարգով: Դպրոցի վերակառուցմանը զուգահեռ՝ ԱՀ կառավարության հատկացումներով կառուցվում են կաթսայատունը և ջեռուցման ցանցը: Տնօրենը գոհունակությամբ հայտնեց այն բարերարներից՝ «Հայրենասեր» ՀԿ, «Թու-

ֆենկյան» հիմնադրամ և այլն, որոնք տարբեր հարցերում օժանդակում են մանկապարտեզին: Նախակրթարանում տարվա ընթացքում կայանում են բազում հանդեսներ ու ցերեկային մանուկների մասնակցությամբ: Վերջերս տեղի ունեցավ հանդես «Գալը բարի, աշուն» թեմայով: Մասնակցում էին բոլոր երեխաները: Իրենց ծնողների, դաստիարակների, հյուրերի առջև երգով, ասումներով, պարով հանդես եկան փոքրիկները՝ զովերգելով աշնան բարիքները, նրա զեղեցկությունը: Սենյակը ձևավորված էր աշնան բարիքներով, որոնք հիմնականում իրենց հայրենի գյուղի այգիներում ու բանջարանոցներում են աճում: Մանկապարտեզի տնօրեն Հ. Հակոբյանը շորհավորեց ներկաներին, գոհունակություն հայտնեց հանդեսը լավ կազմակերպելու համար, մաղթեց, որ խաղաղությունը տիրի աշխարհին, որ նման զուսմագեղ աշուններ գան, և մեր երեխաները մեծանան կապույտ երկնքի տակ:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

ՍՊՈՐՏ

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՎԱՐԿԱՆՇԱՅԻՆ ՄԵՆԱՄԱՐՏԵՐ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախում գործող տարբեր մարզածեերի զարգացումն ու մասսայականությունը վկայում են մեր հանրապետությունում սպորտի արդիականության մասին: Տարբեր մարզական ակումբների և ֆեդերացիաների կողմից մարզական գունագեղ ներկայացումներ կազմակերպելը ու բարձր մակարդակով մրցաշարեր անցկացնելը՝ մասնակցությամբ ոչ միայն արցախցի մարզիկների, այլևս բացառիկ երեւոյթ չեն: Դերակա անգամ կրքեր բորբոքեց Արցախի արմֆայթինգի ֆեդերացիան՝ ՀՀ արմֆայթինգի ֆեդերացիայի համագործակցությամբ:

Հոկտեմբերի 20-ին Ստեփանակերտի հ.6 դպրոցի մարզադահլիճը համակված էր արմֆայթինգ մարզածեերի բնորոշ բուռն մարտական ոգով: Արցախից եւ Հայաստանի տարբեր մարզերից մասնակցող մարզիկները մեծամարտեցին Արցախում առաջին անգամ կազմակերպված մեծամարտերի վարկանշային առաջնությունում: ՀՀ արմֆայթինգի ֆեդերացիայի նախագահ Հայկ Դուկասյանը պարգաբանեց Արցախում մեծ մրցաշարերի կազմակերպման նպատակը: Արցախի Հանրապետությունը միջազգային հարթակներում ճանաչելի դարձնելու նպատակով Հայկ Դուկասյանի առաջարկով եւ Արմֆայթինգ ֆեդերացիայի խորհրդի կազմի որոշմամբ ստեղծվեց միջազգային վարկանշային կազմակերպություն ընդհանուր մեծամարտերից, որը կոչվում է ArtsakhFC (Արցախի մեծամարտերի կազմակերպություն):

Արցախում միջազգային հարթակներում ճանաչելի դարձնելու նպատակով Հայկ Դուկասյանի առաջարկով եւ Արմֆայթինգ ֆեդերացիայի խորհրդի կազմի որոշմամբ ստեղծվեց միջազգային վարկանշային կազմակերպություն ընդհանուր մեծամարտերից, որը կոչվում է ArtsakhFC (Արցախի մեծամարտերի կազմակերպություն): Սա իր տեսակով առաջին վարկանշային կազմակերպությունն է Արցախում: Հայկ Դուկասյանն առանձնանշեց, որ լավ հիմք է ստեղծվում արտասահմանից հրավիրել պրոֆեսիոնալ մարզիկներ՝ մասնակցելու Արցախում միջազգային վարկանշով մրցաշարերին,



մարտերի առաջնություն): Կազմակերպությունը կնպաստի Արցախում ավելի մասսայական դարձնել ընդհանուր մեծամարտերը եւ լավագույն մարզիկներին հնարավորություն կտա ձեռք բերել վարկանշի ինչպես նաեւ Արցախը ճանաչելու, մշակութային ու սպորտին ավելի լավ ծանոթանալու համար: Իսկ արցախցի մարզիկների համար ստեղծվում են բոլոր բարենպաստ պայմանները, որպեսզի ավելի լավ պարապեն եւ հնարավորություն ունենան ուժերը ցուցադրելու նաեւ միջազգային մրցաշարերում: Ուշագրավ էր Հ. Դուկասյանի դիտողությունն այն հարցի վերաբերյալ, որ տարածաշրջանում մեր հարեւան պետությունները չունեն այսպիսի վարկանշային կազմակերպություն:

Արցաշարին մասնակցում էր 32 մարզիկ՝ սիրողական եւ պրոֆեսիոնալ մեծամարտերի ձեւերում: Գլխավոր մրցավարն էջմիածնի արմֆայթինգի ակումբի մարզիչ եւ ճանաչված մարզիկ Անդրանիկ Կարապետյանն էր: Մեծամարտերում անգիջում պայքարող մարզիկներին բուռն ծափողջույնների ներքո քաջալերում էր մեր մարզասեր հանրությունը:

Վերջին տարիներին սկսել են ավելի մեծ հետաքրքրություն վայելել մեծամարտերն Արցախում, հատկապես պատանիների ու երիտասարդների շրջանում: Հնարավոր է՝ դա պայմանավորված է նաեւ տարածաշրջանում առկա օրհասական խնդրի՝ պատերազմական գոտում գտնվելու հետ: Արմֆայթինգ մարզածեերի սկզբունքներն ու տեխնիկան լավագույն հիմք են զինվոր պատրաստելու գործում:

Այս նկատառումն ունեցավ Արցախի արմֆայթինգի ֆեդերացիայի նորընտիր նախագահ Մխիթար Աթախանյանը: Մարզիկների մեջ դաստիարակելով հզոր մարտական ոգի, կոփելով ֆիզիկապես եւ հոգեպես՝ կունենանք հզոր սեռեր, հզոր բանակ, հայ ազգի իսկական պաշտպաններ:

Արցաշարին ներկա էին ԱՀ ԿԳՄ նախարարության սպորտի վարչության պետ Ա. Դանիելյանը, սպորտի ոլորտի այլ ներկայացուցիչներ:

Մասնակից մարզիկների համար նախատեսված էին մրցանակներ, վկայականներ, գավաթներ:

Արցախի արմֆայթինգի ֆեդերացիայի գլխավոր մարզիչ, աշխարհի չեմպիոն Արմեն Հայրապետյանին շնորհվեց շնորհակալագիր Անդրանիկ Կարապետյանի կողմից՝ էջմիածնի մարզական ակումբի հետ համագործակցելու համար: Գլխավոր մարզիչն իր հերթին շնորհակալություն հայտնեց բոլոր աջակիցներին, խոստացավ, որ պրոֆեսիոնալ վարկանշային մեծամարտերի կազմակերպումն Արցախում շարունակական կլինի, եւ կանեն ամեն ինչ՝ սպորտային Արցախն աշխարհին ճանաչելի դարձնելու համար:

ՄԵՏԱՆՈՒՆԱԿԱՆ ԴՊՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արցախում սպորտով զբաղվողների թիվն անընդհատ աճում է: Հատկապես արեւելյան մարտարվեստները լայն տարածում ու մասսայականություն ունեն մայրաքաղաքում եւ հանրապետության շրջաններում: Մարզիկների թվի աճն, իհարկե, ողջունելի է, մինչդեռ քանակի հետ որակ ապահովելն առկա անբարենպաստ պայմաններում, մարզիչների մտահոգության տեղիք է տալիս: Կիրկուշին կարատեի աշխարհի կրկնակի, Եվրոպայի բազմակի չեմպիոն, հազվագյուտ եւ կիրկուշին կարատեի սիրված մարզիչ Արթուր Առուշանյանի հետ առիթ ունեցանք զրուցելու: Օրակարգում ոչ այնքան սպասվող մրցաշարերի թեման էր, որքան մարզիչն մտահոգող՝ մարզիկներին չբավարարող մարզադահլիճներին վերաբերող հարցերը: Մարզիչը պարգաբանեց, որ իրենց ֆեդերացիայի մարզիչներն Ստեփանակերտում մարզիկների պարապմունքներն անց են կացնում դպրոցների մարզադահլիճներում: Ընդ որում, միեւնույն մարզադահլիճում պարապում են նաեւ այլ մարզածեերով տարբեր խմբեր: Յուրաքանչյուր խմբի համար սահմանված է ժամանակ, որը չի անցնում երկու ժամը: Ա. Առուշանյանի մեկնաբանմամբ՝ ընդամենը շաբաթական երեք կամ երկու անգամ ընթացող երկու ժամ տեւողությամբ պարապմունքը քիչ է մարզիկների համար, հատկապես երբ որեւէ մրցաշարի համար նախապատրաստական ինտենսիվ պարապմունքներ են անհրաժեշտ լինում: Մարզադահլիճների զբաղված լինելու պատճառով հատկացված ժամերը փոփոխման չեն ենթարկվում: Մարզիչն իր մտահոգությունը հայտնեց նաեւ այն առումով, որ իրենց սաներն ստիպված են բավարարվել եղածով եւ համակերպվել որոշ մարզադահլիճներում առկա հակասանիտարափոխանակ պայմաններին: Չնայած մայրաքաղաքը համալրվում է մարզադահլիճներով, այնուամենայնիվ, մարզիկների թվի աճի եւ սպորտի հանդեպ հետաքրքրություն ունեցողների ավելացման հետ ի հայտ է գալիս մարզադահլիճների պակասություն: Մարզիչի խոսքով՝ խնդրի լուծումը կնպաստի

Արցախում սպորտի զարգացմանը, մարզիչներին կիսբանի պատշաճ պարապմունքներ անցկացնելու, իսկ մարզիկները հնարավորություն կունենան ավելի լավ արդյունքներ դրսեւորել: Խնդրի լուծման տարբերակների մասին խոսելիս մարզիչը թերեւս լավատեսություն չդրսեւորեց՝ մեկնաբանելով, որ



բազմիցս խոսել է դրա մասին, մինչդեռ արձագանք չի եղել: Հուսանք, որ առաջիկայում արձագանքներ կլինեն համապատասխան մարմինների կողմից: Չնայած դրան, մարզիկների եւ մարզիչների ակտիվ անմահանջ գործունեությունը շարունակվում է, մրցաշարերն ավելի հաճախ են կազմակերպվում, իսկ ցուցանիշներն ապացուցում են, որ քանակն ու որակը ներդաշնակության մեջ են: Դա հատկապես նկատելի եղավ հոկտեմբերի 28-ին Արցախի «Օյանա» կիրկուշին կարատե-դո ֆեդերացիայի կազմակերպած կիրկուշին կարատեի նախընտրական մրցաշարի ժամանակ, որին մասնակցեց ընդհանուր հաշվով շուրջ 180 մարզիկ: Արցաշարին մասնակցեց 6 խումբ Ստեփանակերտում մարզվող մարզիկներից, ինչպես նաեւ մարզիկներ Այգեստանի, Նորադյուղի, Թաղավարդի մասնաճյուղերից: Նախընտրական մրցաշարը կազմակերպվել էր 2 փուլով: Առաջին փուլին մասնակցել են 12-17 տարեկան մարզիկներ, երկրորդ

փուլին՝ 4-11 տարեկան մարզիկներ: Արցաշարը վարում էր փորձառու մարզիչ, մրցավար Արմեն Պետրոսյանը: Նրանից տեղեկացանք, որ մրցաշարը կազմակերպվել է լավագույն տեխնիկա եւ մարզածեերի տիրապետելու բարձր մակարդակ ցուցաբերող մարզիկներին վերհանելու նպատակով: Առաջին տեղեր զբաղեցրած, ինչպես նաեւ լավ արդյունք ցուցաբերած մարզիկները կմասնակցեն նոյեմբերի 1-24-ը կայանալիք նախապատրաստական մարզահավաքի եւ կմեկնեն Երեւան՝ մասնակցելու նոյեմբերի 26-ին կայանալիք ՀՀ կիրկուշին կարատեի գավաթի խաղարկությանը: Մարզիկները ցուցադրեցին մարզածեերի տիրապետելու բարձր մակարդակ: Արձանագրվեց 32 1-ին տեղ: Առանձին ուշադրության արժանացան 4-5 տարեկան մարզիկների մեծամարտերը՝ փոքր կառուցվածքով, բայց հզոր կամքով: Ողջունելի է, որ լինելով մարտարվեստի տեխնիկապես կոպիտ ու ուժային ոճ, կիրկուշինը հետաքրքրում է նաեւ արցախցի աղջիկներին: Կիրկուշինով պարապող աղջիկ մարզիկները կարողացան լավ արդյունք ցույց տալ: Արցաշարը գոհ է ընդհանուր արդյունքներից: Մրցանակային 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղ զբաղված մարզիկները պարգևատրվել են մեդալներով եւ պատվոգրերով:

Իսկ ֆեդերացիայի պատանի եւ երիտասարդ մարզիկներ Դավիթ Ավետիսյանն (16-17 տ.կ., -70 ք.կ.) ու Արթուր Առուշանյանը (18+ տ.կ., -65 ք.կ.) պատրաստվում են մասնակցել նոյեմբերի 1-6-ը Աստանայում (Դաւախստան) ընթանալիք կիրկուշին կարատեի պատանիների եւ երիտասարդների միջեւ աշխարհի առաջնությանը: Մարզիկներին ցանկանում ենք հաջողություն:

ԾՁՃՊՕԷԸ ԷԹ՝ ՉՊԺՁՁՁՁՁՁՁՁՁՁ

Ցանկանում են իմ ուրախությունը և հույզերը կիսել բոլորի հետ: Ետևում թողնելով Արցախյան պատերազմի դաժան և տառապալի տարիները, պատմության հիշողությունից չջնջելով 1991 թվականի հունիսի 12-ի մահաբեր ժամերը՝ Նոր Շահումյանի շրջանի վերանվանված բոլոր համայնքներում կյանքը եռում է: Վերաբնակեցված շահումյանցիները՝ բուզուկից ու երբեցից, դարաշինարցից ու մանաշիդցից, վերինշենցից և մյուսները նոր տուն դրեցին, նոր ծառ տնկեցին, զավակ ունեցան, իսկ այսօր արդեն ամուսնացնում են և սրտատրոփ սպասում թռան ծնունդին: Կյանքը եռում է նաև Նոր Դարաշինար համայնքում, մասնավորապես Արամայիս խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցում: Իսկ ինչու՞ն է իմ ուրախությունը:

Այն, որ այսօր դպրոցը հպարտանում է իր սաներով, որոնք ուսանողներ են. Վահե Դանիելյան, Հմայակ Զաքարյան, Արուսիկ Ազարյան, Ադրինե Ավետիսյան, Վահե Ասատրյան, Հովիկ Եղոյան: Վահեն պատմաբան է, Հմայակը՝ ապագա երգիչ, Արուսիկը՝ մանկավարժ, Ադրինեն՝ ֆինանսիստ, Հովիկը՝ բժիշկ, իսկ Վահեն դպրոցի պարծանքն է և հայրենիքի պաշտպան, սովորում է Ստեփանակերտի Իվանյանի անվան ռազմա-մարզական վարժարանում լավ և գերազանց գնահատականներով: Սա, բնականաբար, դպրոցի տնօրեն Ռուզաննա Ալլահվերդյանի գլխավորությամբ մանկավարժական համերաշխ կոլեկտիվի աշխատանքի արդյունքն է: Սա վառ օրինակ է հայ ազգի անկոտրում կամքի, ապրելու և հարատևելու մեծ ձգտումի, ազգային պահպանման ու հայրենասիրության դրսևորման: Այսօր քաղաքային և գյուղական դպրոցների տարբերությունն առկա է, սակայն դա չի խոչընդոտում, որ մեր աշակերտները սովորեն Հայաստանի և Արցախի Հանրապետությունների բուհերում և ռազմական ուսումնական հաստատություններում: Այս է, որ ինձ մղում է հուզմունքից ճշալ, որ հայը կարարի՝ որտեղ էլ որ լինի, ինչ պայմաններում էլ որ ապրի և սովորի:

Ի՞նչ սիրատուն ազգ, ես սիրում եմ քեզ, գավակներիդ՝ առավել ևս:

Հարգանքներով՝ Ավարդ ՎԱՐԿԱՆՇԱՆ Նոր Շահումյանի շրջանի Նոր Դարաշինարի միջև. դպրոցի ուսուցչուհի

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԵՒՕԾՆԱԵԻԾԱԶՆԱԵՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՄ 2017-2018 ՎԵՐԱԳՐՈՒՄԻ ԶԵՆՆԱԿԱՆ ԿՍ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՅ Կ.ՄԱՅԻՅԱՆԻ ՂԵՐՈՒՄԸ

(Ըստ Ասկերանի շրջվարչակազմի աշխատակազմի ԿՍ բաժնի վարիչ Կ.Մայիսյանի զեկուցման)

Ուսումնական տարին բարենպաստ էր հաջողությունների, ձեռքբերումների առումով: Արժեքների վերահիմնաստվածում այս փուլում քիչ չեն մեծ անելիքները: Մենք պետք է ձեռքբերենք համակարգում առկա ինտելեկտի, դասավանդման ավանդական մեթոդներից, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները հասցնենք նոր որակական մակարդակի, նախադպրոցականների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող դպրոցականների համար ապահովենք առանձնահատուկ պայմաններ, իրականացնենք ծրագրային պահանջները:

2017-2018 ուսումնական տարում գործող 32 հանրակրթական դպրոցների կարգավիճակներում փոփոխություն է կատարվել: Սարդարաշենի միջնակարգ վերակազմավորվել է հիմնականի, Ուղտասարի հիմնականը՝ միջնակարգի, իսկ Ջրաղացների մասնաճյուղ դպրոցը՝ հիմնականի:

2017-2018 ուսումնական տարում ցանցի պատկերը հետևյալն է. միջնակարգ դպրոցներ՝ 24, հիմնական դպրոցներ՝ 9, մասնաճյուղ դպրոցներ՝ 5, որոնք գործում են Սառնաղբյուր, Հիլիս, Փառուխ, Արմենակավան, Մոշխմատ համայնքներում:

Անցած ուսումնական տարվա նախօրեին որոշակի աշխատանքներ են տարվել Սառնաղբյուրի կրթօջախը հիմնականի վերակազմավորելու ուղղությամբ: Այդ հարցն այսօր էլ օրակարգում է: Շենքային պայմանները և աշակերտական քանակակազմն այդ հնարավորություններն ընձեռում են: Եթե ԱՅ ԿԳՄՆ-ի կողմից ցուցաբերվի աջակցություն, կհաջողվի այն իրականացնել:

2017-2018 ուսումնականում հանրակրթական դպրոցներ է հաճախել 2448 աշակերտ, որը 78-ով ավելի է անցած ուսումնականից: Վերջին 5 տարիներին արձանագրվել է աշակերտների թվաքանակի աճի միտում:

Ընթացիկ ուսումնական տարում 1-ին դասարան է հաճախել 267 աշակերտ, 9-րդ դասարանում սովորել՝ 178 աշակերտ, 12-րդ դասարանում՝ 112 աշակերտ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 58 աշակերտ գնահատվել է, և համապատասխան ծրագրերով կշարունակեն ուսումնական գործընթացը: 8 աշակերտի համար կազմակերպվում է տնային ուսուցում (Ասկերան, Իվանյան, Խնձրիստան):

Ուսումնական գործընթացն իրականացնում են բարձրագույն կրթությամբ 660 և միջնակարգ մասնագիտական կրթությամբ՝ 15 ուսուցիչներ, իսկ սպասարկման ոլորտում ընդգրկված են 314 աշխատողներ:

Դասարան-լրակազմերը ձևավորվել են հետևյալ հարաբերությամբ. Ասկերանի միջնակարգ դպրոց, ա/ կրտսեր դպրոց-8, բ/ միջին դպրոց-7, գ/ ավագ դպրոց-3, գյուղական դպրոցներ:

ա/ կրտսեր դպրոց-88, բ/ միջին դպրոց-120, 5, գ/ ավագ դպրոց-57:

Ընդամենը՝ 283, 5 դասարան-լրակազմ: Անցած ուսումնական տարում այն կազմել է 280:

Դասաժամերի ընդհանուր թիվը կազմել է 9117 (անցած ուստարում՝ 9004 ժամ), ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը՝ 13,5 ժամ:

Առաջնորդվելով դպրոցներում թափուր տեղերը մրցութային կարգով համալրելու հրամանով՝ օգոստոսի 23-30-ը մրցույթի անցկացման նոր կարգի համաձայն գինդեկի, հայոց լեզվի, մաթեմատիկայի, ֆիզիկայի, դաստիարակի թափուր տեղերի համար կազմակերպվել են մրցույթներ, սակայն եթե խնամախի և Այգեստանի դպրոցների զինղեկների, Հարավի միջնա-

կարգ դպրոցի հայոց լեզվի ուսուցչի թափուր տեղերի համար դիմել են 4 և ավելի ուսուցիչներ, ապա Խնամախի և Նախիջևանի կրթօջախների մաթեմատիկայի ուսուցչի թափուր տեղի համար դիմորդներ չեն գրանցվել:

8 ուսուցիչ օգտվում է ԼՂԿ կառավարության կողմից ընձեռված հավելավճարից: Անցած ուստարիներին Նորագյուղի, Խնամախի, Իվանյանի նախադպրոցական հիմնարկներում կազմակերպվել են դաստիարակի թափուր տեղերի մրցույթներ, իսկ այս ուսումնականում՝ Ակնաղբյուրում:

Պետական նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված է 293 նախադպրոցական. Իվանյան - 2 խումբ՝ 40 երեխա, Այգեստան - 2 խումբ՝ 46 երեխա, Ավետարանոց - 2 խումբ՝ 44 երեխա, Նորագյուղ - 4 խումբ՝ 88 երեխա, Խնամախ - 2 խումբ՝ 47 երեխա, Ակնաղբյուր - 1 խումբ՝ 17 երեխա, Խաչեն - 1 խումբ՝ 11 երեխա:

Ասկերանի և Խնձրիստանի հովանավորչական մանկապարտեզներ է հաճախում 124 նախադպրոցական: Նախադպրոցական հիմնարկներ հաճախող երեխաների թիվը կազմում է շրջանի նախադպրոցական տարիքի երեխաների 24%-ը (1730 երեխա):

Նոր մանկական հիմնարկ է կառուցվում Շոշում: Սարուշենի մանկապարտեզի շենքը պատրաստ է, գույքը տեղադրված, հուսանք, որ խանգարող հանգամանքներ չեն լինի նոր ուսումնականում երեխաների ընդգրկման գործընթացը սկսելուն:

Նախատեսված է նաև նոր նախադպրոցական հիմնարկ կառուցել Այգեստան համայնքում:

Խնամախի և Ակնաղբյուրի մանկական հիմնարկները տեղակայված են դպրոցական շենքերում: Հուսանք, որ հետագայում նոր նախադպրոցական հիմնարկներ կբացվեն մյուս համայնքներում:

Ասկերանի շրջանի ՄՊՍԿ սաները 2017-2018 ուսումնական տարում հիանալի նվեր ստացան՝ աշխատանքները սկսելով բոլոր հարմարություններով ապահովված վերանորոգված շենքում:

Կենտրոնում գործում է 36 խումբ՝ 380 երեխայի ընդգրկմամբ: Խմբակներ են գործում Ասկերանի, Խնամախի, Իվանյանի, Նախիջևանի, Նորագյուղի, Այգեստանի, Բերքաձորի, Հովսեփավանի, Շոշի, Ավետարանոցի, Պատարայի, Ակնաղբյուրի դպրոցներում: Ընթացիկ ուսումնական տարում գործել են բազմաբնույթ ուղղվածություն ունեցող՝ ուսուցողական 13 անուն խմբակներ, ինչպիսիք են՝ երգ, պար, ասմունք, ձեռագործություն, գորելեն, մաքրամե, կվիլինգ, ուլունքագործություն, թատերական, նկարչություն, շյուրազործություն և հելունագործություն, գորգագործություն, կարպետագործություն:

2018թ. հունվարին հանրապետական մասշտաբով կազմակերպված ցուցահանդես-մրցույթում կենտրոնը պարզապարզվել է «Մայրական երախտագիտություն» մեդալով՝ «Գեղագիտական ճաշակի զարգացման և բանակ-հասարակություն» ակտիվ կապի ամրապնդման համար:

Համընդհանուր տեսչական ստուգումներ են անցկացվել Պատարայի և Խնամքի դպրոցներում, տրվել համապատասխան գնահատականներ՝ և՛ ուրախալի, և՛ մտահոգիչ: Խնամախի, Շոշի, Այգեստանի, Խնամախի, Կամիր գյուղի կրթական հաստատություններում ևս պետք է կազմակերպվեն տեսչական ստուգումներ ու մեթոդական օգնություն:

Հաշվետու ուսումնականում ևս կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ շրջանի 105 ուսուցիչների ընդգրկմամբ: Քանի որ վերապատրաստման 2-րդ փուլի 2-րդ շրջանն է, ընդգրկվել էին բավական թվով առաջին անգամ վե-

րապատրաստվողներ, ինչը կնպաստի նրանց աշխատանքի հետագա արգասաբեր գործունեությանը:

Նշված 105 ուսուցիչներն անցան նաև ատեստավորման փուլը: Տեսնենք, թե նրանցից քանիսը կձգտեն ստանալ որակավորման տարակարգ:

Առայժմ տարակարգ ստանալու մեծ մրցակցություն է Պատարայի և Նորագյուղի դպրոցներում, ինչը ողջունելի և խրախուսելի է:

Գաղտնիք չէ, որ դպրոցականների առարկայական օլիմպիադայի նպատակը շարունակում է մնալ սովորողների աշխատասիրության, բարձր պատասխանատվության, համակողմանի զարգացման առաջնայնության ապահովումը:

Ձեռքբերումներն այս առումով գոհացուցիչ են:

Օլիմպիադայի շրջանային փուլին մասնակցած 383 դպրոցականներից հանրապետական փուլին մասնակցելու իրավունք ստացած 55 աշակերտներ զբաղեցրել են մրցանակային 11 տեղ, որից 1-ին տեղ՝ Մանուչարյան Աննա՝ պատմություն, Ակնաղբյուրի մ/դ, Սարգսյան Արգիշտի՝ պատմություն, Ակնաղբյուրի մ/դ, Գաբրիելյան Մերի՝ ՆՁՊ, Ասկերանի մ/դ, 2-րդ տեղ՝ Սահակյան Արմեն՝ ֆիզիկա, Սգնեքի մ/դ, Ալահվերդյան Հարություն՝ մաթեմատիկա, Ասկերանի մ/դ, 3-րդ տեղ՝ Բեգլարյան Լիլիթ՝ հայոց լեզու, Ասկերանի մ/դ, Արզումանյան Մոնիկա՝ մաթեմատիկա, Ասկերանի մ/դ, Սարգսյան Սոսե՝ կենսաբանություն, Ակնաղբյուրի մ/դ, Պետրոսյան Մարինե՝ աշխարհագրություն, Նորագյուղի մ/դ, Գասպարյան Լիանա՝ աշխարհագրություն, Պատարայի մ/դ, Մուսայելյան Հարություն՝ աշխարհագրություն, Սգնեքի մ/դ:

15 աշակերտ պարգևատրվել է ԱՅ ԿԳՄՆ գովասանագրերով: Ասկերանի մ/դ 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտներ Հարություն Ալահվերդյանը և Մոնիկա Արզումանյանը մաթեմատիկա առարկայից ցուցաբերել են ամենաբարձր ցուցանիշները: Եզրափակիչ փուլին մասնակցել է 21 աշակերտ, որից 8-ը արժանացել է պատվոգրի, 6-ը՝ գովասանագրի:

Հանրապետությունում օլիմպիադայի արդյունքներով շրջանը զբաղեցրել է 1-ին տեղը. դա և՛ պատիվ է, և՛ պարտավորեցնող, ուստի իրավունք չունենք դրանից ցածր հարթակ զբաղեցնել:

Ինչ խոսք, սա ապահովել են Ակնաղբյուրի, Սգնեքի, Ասկերանի, մասամբ՝ Նորագյուղի և Պատարայի դպրոցականները:

Ի՞նչ ասել մյուս մանկավարժական կոլեկտիվների մասին, արդյոք ժամանակը չէ՞ զգաստանալ, մտածել սրբափ, թե՞ համակերպվել «կխոսեն, կանցնեն» կարգախոսին:

«Լուսարար» պաշտոնաթերթն անդրադարձել է օլիմպիադայի արդյունքներին. նշվել է Սգնեքի դպրոցի ձեռքբերումների մասին (ի դեպ, այդ մասին, օգոստոսի 2-8-ը համահայկական կրթական խորհրդաժողովում արտահայտվել է ԱՅ ԿԳՄ նախարարը), միաժամանակ նշվել են 100 և ավելի աշակերտներ ունեցող դպրոցներ, որոնք տարիներ շարունակ մասնակիցներ չեն ունենում:

Սա է փաստը, որը մտահոգության տեղիք է տալիս (Ավետարանոցի դպրոցի օրինակը):

ԿԳՄՆ ԳԹԿ-ի կողմից արտաքին ընթացիկ ստուգումները (ղեկներն են և պարիլ ամիսներին) ևս նպաստում են բարձրացնելու մանկավարժների, սովորողների պատասխանատվությունը: Տնօրենների խորհրդակցություններում խորությամբ վերլուծություն է կատարվում ստուգումների արդյունքների ուղղությամբ:

Այսպես, 2017թ. դեկտեմբերի 5-ի արտաքին ընթացիկ գնահատումների արդյունքներով՝ մասնակցած 701 աշակեր-

տից անբավարար է ստացել 143-ը կամ մասնակիցների 21%-ը: 529 աշակերտ կամ մասնակիցների 75%-ը ստացել է 4-8 միավոր: 9 և 10 միավորներ է հավաքել 29 աշակերտ:

2018թ. ապրիլի 18-ի գնահատումների արդյունքներով՝ 520 աշակերտից 157-ը կամ մասնակիցների 30%-ը ստացել է անբավարար գնահատական: Նման ցուցանիշ առաջին անգամ է գրանցվել գնահատումների ամբողջ ընթացքում:

Շրջանի դպրոցականներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ասմունքի, շարադրությունների, ստեղծագործող աշակերտների, պատանի նկարիչների մրցույթներին: Ասմունքի մրցույթում 2-րդ մրցանակային տեղ է զբաղեցրել Ասկերանի մ/դ 9-րդ դասարանի աշակերտուհի Սյուզաննա Մելքունյանը: Ստեղծագործական աշխատանքներում՝ Իվանյանի և Խնձրիստանի աշակերտները: Աշակերտներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Արցախյան շարժման 30-ամյակին նվիրված ինտելեկտուալ խաղին (Խնամախի, Ակնաղբյուրի, Իվանյանի, Ավետարանոցի, Ասկերանի, Նորագյուղի, Նախիջևանի, Խրամորթի դպրոցները):

Ուստարում շրջանում անց է կացվել 9 մարզական առաջնություն: Դրանց ակտիվ մասնակցել են Ասկերանի, Նորագյուղի, Խաչենի, Խնձրիստանի, Իվանյանի, Խնամախի, Պատարայի, Ակնաղբյուրի կրթական հաստատությունների աշակերտները: 2017-2018 ուստարում շրջանի հանրակրթական դպրոցների հավաքական թիմերն ըստ մարզածերի հանրապետությունում գրավել են հետևյալ մրցանակային տեղերը. վոլեյբոլ (աղջիկներ)՝ 2-րդ տեղ (տղաներ)՝ 3-րդ տեղ, «Ազգային ժողովի զավաթ»-ի առաջնություն՝ 2-րդ տեղ, ռազմականացված հնգամարտ՝ 3-րդ տեղ, «Սպորտլանդիա». մասնակցել է 3 տարիքային խումբ՝ գրավել երկու 2-րդ տեղ և մեկ 3-րդ տեղ, «Լավագույն մարզական ընտանիք» առաջնությունում 2 ընտանիք գրավել է մրցանակային տեղ և մասնակցել ՀՀ Մուսանուն առաջնությանը:

Ակտիվությամբ է կազմակերպվել դպրոցականների ամառային հանգիստը: 90 երեխա մեկ շաբաթ ժամկետով հանգստացել է «Երկրպագի» ճամբարում (Գեղարքունիքի մարզ), 15 աշակերտ՝ Հանքավանի ճամբարում, 6-ը՝ «Թեժ լեռ» ճամբարում: «Ապետ» ճամբարում կազմակերպվել է 10-րդ դասարանների 48 տղաների հանգիստը: Հունաստանում՝ շրջանի Ակնաղբյուրի, Ասկերանի և Նորագյուղի դպրոցների 1-ական աշակերտ: Բակային ճամբար է կազմակերպվել Ասկերանի մ/դ-ում՝ 150 սովորողի ընդգրկմամբ:

Կրթության բաժինը անելիքներ ունի դպրոցներում ղեկավար կադրերի սերմնափոխության նախապատրաստական աշխատանքներում: Ստահոգության տեղիք է տալիս նաև մի շարք դպրոցներում տիրող բարոյազրկողական վատառողջ մթնոլորտը: Դեկավարները և մանկավարժները սրբափ մտածելու կարողություն պետք է ցուցաբերեն, ոչ թե առիթ-անառիթ բախումների, վեճերի, փոխադարձ վիրավորանքների մթնոլորտ ստեղծեն:

Դասողական աշխատանքների պլանում նախատեսել բնակավայրերի պատմությունն ուսումնասիրելը, դպրոցներում տեսանելի տեղերում ունենալ գյուղի պատմության մասին տեղեկություններ (ցանկալի է լուսանկարներով): Լուրջ վերաբերվել հուշարձանների խնամքին, պահպանությանը:

Նախադպրոցական հիմնարկների աշխատանքները հստակեցնելու նպատակով կարծում ենք, պետք է համապատասխան հաստիք նախատեսել: Հասունացել է նաև կրթության բաժնում իրավաբան ունենալու հարցը:

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԵՂՈՒՄԻ ԶՄԻՆՈՒ ԶԻ ԾՄՂԶԹՃԻ ԲԾԾՈՒԾՄԻՕԾ

Հոկտեմբերի 30-31-ը Արցախի հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-9-րդ դասարանների տղաների միջև անցկացվեցին ռազմականացված հնգամսյա հանրապետական մրցումներ: Ընդհանուր ղեկավարությունը իրականացնում էին ԱՀ կրթության, գիտության և սպորտի ու պաշտպանության նախարարությունները, իսկ անմիջական անցկացումը կազմակերպել է ԿԳՍՆ կողմից հաստատված մրցավարական հանձնախումբը: Մրցումներն անցկացվեցին հետևյալ մար-

կան թիմերը: Առաջին օրը մրցումներն անցկացվեցին Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան հ.2 հիմնական դպրոցի ռազմամարզահրապար-

երկրոյա համառ մրցումներից հետո ամփոփվեցին արդյունքները: Մ.Շահրամանյանի տեղեկացմամբ յուրաքանչյուր մրցաձևում տրվել են տեղեր, որոնց հանրագումարով էլ որոշվել են վերջնական տեղերը:

արդյունք գրանցած տղաները, յուրքանայուր մրցաձևից՝ մեկ հոգի:

Վազբ 100 մ մրցաձևում լավագույն է ճանաչվել ճարտարի հ.5 միջնակարգ դպրոցի աշակերտ Արսեն Դանիելյանը, վազբ 1000 մ-ում՝ Ստեփանակերտի հ.2 հիմնական դպրոցի աշակերտ Սասուն Սարգսյանը, նոնակի նետում մրցաձևում լավագույնն էր Երուշիկ Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտ Արեգ Դանիելյանը, վերելք ուժով մրցաձևում՝ Մարտունու շրջանի Սոսի միջնակարգ դպրոցի աշակերտ Իսահակ Ավանեսյանը, ռազմականացված կրոսավազքից՝ Ստեփանակերտի հ.10 հիմնական դպրոցի աշակերտ Սևակ Սողոմոնյանը:

Մրցումները հաջողությամբ



զածներից և ռազմակիրառական վարժություններից՝

- վազբ՝ 1000 մ,
- վազբ՝ 100 մ,
- վերելք՝ ուժով,
- նոնակի նետում հեռավորության վրա,
- ռազմականացված կրոսավազք:

Ռազմականացված կրոսավազքի մրցումներում ըստ կարգի ներառված են ձգումներ պտտածողի վրա, ինքնաձիգի քանդում-հավաքում, պահեստատուփի լիցքավորում և լիցքաթափում, հրաձգություն օդամղիչ հրացանից, նոնակի նետում, լաբիրինթոսի հաղթահարում հակազգով, 20 կգ-անոց փամփուշտների արկղի տեղափոխում:

Մրցումներին մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և բոլոր շրջանների հավաքա-

կում, իսկ երկրորդ օրը վազբը՝ Ստ.Շահրամանյանի անվան մարզադաշտում: Ինչպես տեղեկացանք ԿԳՍՆ ռազմահայրենասիրական ՌՀ, ՖԳ և ՀԿՀԿ բաժնի առաջատար մասնագետ Մուրադ Շահրամանյանից, դպրոցականների պատրաստվածության աստիճանը տարբերակների բարձրացում է, իսկ նույն բաժնի գլխավոր մասնագետ Արթուր Աթանեսյանի մեկնաբանմամբ արդյունքներն ավելի բարձր կլինեն, եթե բոլոր շրջաններում անցկացվեր մրցումների շրջանային փուլը:

Անհատական մրցումներում 1-3-րդ տեղեր գրաված մարզիկները պարգևատրվեցին ԱՀ ԿԳՍ ու պաշտպանության նախարարությունների պարգևներով:

1-ին տեղ գրավել է Հաղորուփ շրջանի Տոդի միջնակարգ դպրոցի աշակերտ Սերգեյ Ադամյանը, 2-րդ տեղ՝ Մարտակերտի շրջանի Վանի միջնակարգ դպրոցի աշակերտ Սերգեյ Դավթյանը, 3-րդ տեղ՝ Մարտակերտի հ.2 հիմնական դպրոցի աշակերտ Ռոբերտ Գաբրիելյանը:

ԱՀ ԿԳՍՆ-ի կողմից պատվոգրերով պարգևատրվեցին ըստ մրցաձևերի լավագույն

ավարտելու կապակցությամբ թիմերին և բոլոր աշակերտներին շնորհավորեց և շնորհակալություն հայտնեց ԱՀ ԿԳՍՆ ՌՀ, ՖԳ և ՀԿՀԿ բաժնի վարիչ Ստեփան Օհանջանյանը: Պարգևատրումները կատարեցին Ստեփան Օհանջանյանը և ՊՆ ներկայացուցիչ՝ ավագ սպա Դավիթ Օհանջանյանը:

Սեփ. լրատվություն

ԵՐՐՈՐԴ ԱՆՔԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԿՆԵՐ



Արցախյան շարժման 30-ամյակի շրջանակներում մեր ժողովրդի պատմության այս կարևոր իրադարձությանը նվիրված՝ 2018-ի սկզբից Հայաստանի պետական գեղարվեստի ակադեմիայի ուսանողուհի քույրիկս՝ Անահիտ Ընթրյանը, հանդես է եկել գեղանկարների անհատական ցուցահանդեսներով. հունվարին Երևանում՝ «Թեթեյան» մշակութային միությունում, փետրվարին Բերձորում՝ Վ.Թեթեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում: Հոկտեմբերի 2-ին արդեն Ստեփանակերտի պատկերասրահում տեղի ունեցավ երիտասարդ նկարչուհու անհատական ցուցահանդեսը, որը կազմակերպվել է ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության կողմից Քաշաթաղի շրջվարչակազմի օժանդակությամբ: Ցուցահանդեսի բացմա-



խարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների բաժնի վարիչ Երազիկ Դանիելյանը, Արցախի ժուռնալիստների միության նախագահ Կիմ Գաբրիելյանը, Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանը, աշխատակազմի մշակույթի, երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հարութ Ավանեսյանը, շրջանային «Մերան», թերթի գլխավոր խմբագիր Ջոհրաբ Ընթրյանը: Բացման խոսքում Հ. Ավանեսյանը տեղեկացրեց մինչ այս՝ Երևանում և Բերձորում կազ-

մակերպված ցուցահանդեսների մասին: Կարևորեցին նման միջոցառումները, որոնցով հնարավորություն է տրվում երիտասարդ արվեստագետներին իրենց աշխատանքներով հանդես գալ հանրության առջև: Անահիտ Ընթրյանն իր խոսքում նշեց, որ ցուցահանդեսը նվիրվում է Արցախյան շարժման 30-ամյակին, և այստեղ ներկայացվել են նոտ 35 գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքներ. թեմատիկաները և ժանրերը շատ տարբեր են, քանի որ նոտ վեց տարվա ընթացքում կատարված աշխատանքներ են: Կան և էտյուդներ, և հայկական մանրանկարչությունից վերցված գրաֆիկական

պատկերներ, և կոմպոզիցիաներ ու կոլաժներ: Շնորհակալություն հայտնեց Քաշաթաղի շրջվարչակազմին, ԱՀ ՄեՀՁ նախարարությանը, պատկերասրահի տնօրեն Էլենա Դադայանին, որը մեծ սիրով ընդառաջեց ցուցահանդեսի կայաց-

մանը: Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի չորրորդ կուրսի ուսանողուհին նշեց նաև.

- Վեց տարեկանից հաճախել եմ Քաշաթաղի շրջանի արվեստի դպրոց, հետագայում սովորել եմ Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում: Որպես մարդ, ով ուսանողական տարիքից անցում է կատարում արվեստի աշխարհ, ինձ համար շատ կարևոր է, որ իմ արվեստը մարդկանց ոչ թե դուր գա, այլ նրանց ներսում առաջացնի զգացմունք:

Կարևորեց հատկապես այն, որ մասնագետները, ներկաները ճիշտ գնահատական տան իր աշխատանքներին, որ իր համար առավել ընդունելի է քննադատական խոսքը: Ներկաները բարձր գնահատեցին Անահիտի աշխատանքները: Քանդակագործ Արկադի Մկրտչյանը նշեց, որ բոլոր աշխատանքները կատարված են վարպետորեն, սակայն առավել գնահատեց գրաֆիկական աշխատանքները: Պատկերասրահի աշխատակից, քանդակագործ Արմեն Պետրոսյանը, գնահատելով կատարված աշխատանքները, նշեց որոշ կտավների կայացած լինելը, նաև խորհուրդներ տվեց:

Օպյանե ԸՈՒՅՆԱՆ ՈՒՂՂՈՒՄ

«Լուսարար»-ի նախորդ համարի 1-ին էջում պարզապատկերների ցուցակում Սվետլանա Արսենի Ասրյան-ի փոխարեն կարդալ՝ Սվետլանա Թարխանի Ասրյան:

ՀԻՄՆԱԳԻՐ՝ «ԼՈՒՍԱՐԱՐ» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 31.10.2018թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: